



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 10/17**

02.11.2017թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդին առընթեր գիտավերլուծական կենտրոնը (**այսուհետ՝ Կենտրոն**),

քննարկելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (ընդունվել է 18.02.2004թ., ուժի մեջ է մտել 31.12.2004թ., ՀՕ-41-Ն, այսուհետ՝ Օրենք)¹ 104-րդ հոդվածի 1-ին մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

Քաղաքացի Լևոն Բարսեղյանը (ներկայացուցիչ՝ Արտակ Զեյնալյան, այսուհետ՝ Դիմող) 07.07.2017թ. անհատական սահմանադրական դիմումով ՀՀ սահմանադրական դատարանից խնդրել է որոշել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Մասնավորապես, դիմողը խնդրել է.

1. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 81, 61, 62, 63-րդ և 24, 25, 26, 28, 29, 30, 33, 34, 38, 40, 41, 42, 44, 45, 46, 58, 48, 50, 52, 51, 53, 60-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները, այնքանով, որքանով պարճառված ոչ գույքային վնասի հատուցում չի նախատեսում՝ ՀՀ Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված բոլոր հիմնարար իրավունքների խախտման դեպքում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3, 81, 78, 61, 62, 63-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի «համարժեք չափով» դրույթը՝ իրավակիրառական պրակտիկայի կողմից դրան հաղորդած բովանդակությամբ հանդերձ:

Կամ

3. Բացահայտել՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի՝ «համարժեք չափով» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը:

Իր դիրքորոշումը դիմողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով:

¹ Տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317):

Դիմողը նշում է, որ խնդրո առարկա գործի շրջանակներում դատական կարգով հաստատվել էր, որ վարչաիրավական հարաբերություններում վարչական մարմնի կողմից խախտվել էր իր՝ կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքները: Այդ իրավունքներից միայն անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման համար է նրան տրամադրվել ոչ նյութական վնասի հատուցում, քանի որ վիճարկվող դրույթը չի սահմանում մյուս երեք իրավունքների խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցման կարգն ու պայմանները: Մինչդեռ, Կոնվենցիան և Սահմանադրությունը երաշխավորում են Կոնվենցիայով սահմանված բոլոր իրավունքների խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցման իրավունք ու պետություններին պարտավորեցնում են իրենց օրենսդրությամբ երաշխավորել, ապահովել ու պաշտպանել այդ իրավունքները:

Դիմողը գտնում է, որ թեև իր կոնվենցիոն և սահմանադրական իրավունքների խախտումը ճանաչվել էր դատական կարգով, սակայն այդ իրավունքների խախտումը վերացված չէ ու ինքը պահպանում է «զոհի» կարգավիճակը, այսինքն՝ շարունակում են խախտված մնալ իր՝ կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության կոնվենցիոն և սահմանադրական իրավունքները:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթով նախատեսված սահմանափակումը՝ կապված վարչական մարմինների կողմից մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ոչ իրավաչափ միջամտության դեպքում նյութական և ոչ նյութական հատուցում տրամադրելու հետ, թերի իրավակարգավորման պատճառով ոչ իրավաչափորեն սահմանափակում է արդյունավետ դատական պաշտպանության, վնասի հատուցման ու այն հիմնական իրավունքները և ազատությունները, որոնց նկատմամբ միջամտությունը տեղի է ունեցել՝ անկախ այդ իրավունքների խախտումը հանրային իշխանության մարմինների կողմից ճանաչված լինելու փաստից:

Դիմողը գտնում է, որ ՀՀ ներպետական մարմինների կողմից վնասների հատուցումը պետք է կատարվի այնպիսի չափով, ինչպիսին իրավակիրառ պրակտիկայով ձևավորել է Եվրոպական դատարանը Հայաստանի մասնակցությամբ գործերով կայացված վճիռներով, այլապես անձը կպահպանի «զոհի» կարգավիճակը՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով, և կպահպանի գանգատով Եվրոպական դատարան դիմելու և արդարացի փոխհատուցում պահանջելու իրավունքը:

Դիմողը կարծում է, որ իրավակիրառ պրակտիկան վիճարկվող դրույթի՝ «համարժեք չափով» եզրույթին տվել է այնպիսի մեկնաբանություն, որն էականորեն տարբերվում է Եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 41-րդ հոդվածով սահմանված՝ «արդարացի փոխհատուցում» եզրույթին հաղորդած բովանդակությունից:

Ելնելով վերոգրյալից՝ Դիմողը խնդրել է որոշել վիճարկվող նորմի սահմանադրականությունը:

ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 1 դատական կազմը անհատական դիմումի ընդունելիության հարցի վերաբերյալ 21.07.2017թ. որոշմամբ գործն ընդունել է քննության:

Նիստը նշանակված է 2017թ. նոյեմբերի 07-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների բովանդակությունը ՀՀ սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է՝ Կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով:

ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 3. Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները

1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է:

2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

...

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

...

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման

միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ **իրավական բավարար նախադրյալների ստեղծումն** ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:**

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է¹:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է **պետության պոզիտիվ պարտականությունը՝** ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, **օրենսդրի պարտականությունը՝** լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, **իրավակիրառողի պարտականությունը՝** առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:²

ՀՀ Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է **արդարադատության մատչելիության իրավունքին՝** որպես արդար դատաքննության իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը³:

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

² ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

³ ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2010, էջեր 222-223:

ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածում ամրագրված արդարադատության մատչելիության իրավունքի՝ որպես արդար դատաքննության իրավունքի տարրի հիմնարար սահմանադրական երաշխիքներն են՝ ա) դատական քննության հավասարություն և արդարացիություն, բ) անկախ և անկողմնակալ դատարան, գ) դատական քննության ողջամիտ ժամկետ և դ) հրապարակայնություն:

Արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. **«Դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարր է հանդիսանում մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, բողոքի ընդունելիության պայմանների առնչությամբ, քանի որ այն իր էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում, որը կարող է փոփոխվել՝ կախված ժամանակից և տեղից, ինչպես հասարակության, այնպես էլ կոնկրետ անձանց պահանջմունքներին և միջոցներին համապատասխան: Պետություններն այս առնչությամբ օգտվում են հայեցողության ազատությունից: Այնուամենայնիվ, դատարանի մատչելիության իրավունքը չի կարող սահմանափակվել այնպես և այն սահմաններով, որ վնասի նրա էությունը, և դրանք համապատասխանում են Կոնվենցիայի 6 հոդվածի 1-ին կետին, եթե ունեն օրինական նպատակ և կիրառված միջոցների և դրված նպատակի միջև գոյություն ունի արդար հավասարակշռություն»¹:**

Եվրոպական դատարանը միաժամանակ գտնում է. **«Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պարզաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգռված անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն»²:**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել** անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված (2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ) դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունն անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

Ըստ Եվրոպական դատարանի դատական պրակտիկայի՝ դատաքննության և դրա մասնավոր տարրը հանդիսացող մատչելիության իրավունքը «բացարձակ իրավունք» չէ և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, հատկապես, հայցի (բողոքի կամ

¹ Golder v. United Kingdom, 21 feb. 1975, Fayed v. United Kingdom, 25 aug. 1994, Ashingdane v. United Kingdom, 28 may 1985, Garcia Manibardo v. Spain (15 feb. 2000), 29.06.2000, Bellet v. France, 20 nov. 1995, Philis v. Greece, 27 aug. 1991, Tolstoy Miloslavsky v. United Kingdom, 23 jun. 1995:

² Perez de Rada Cavanilles v. Spain, 28 oct. 1998, Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001:

դիմումի) ընդունելիության պայմանների առնչությամբ: Սակայն, անձի դատական քննության իրավունքի մատչելիությունը և իրավունքների պաշտպանության միջոցների արդյունավետությունն ապահովելու համար պետությունը կաշկանդված է պատշաճ պայմաններ և մեխանիզմներ մշակելու և երաշխավորելու պարտականությամբ:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամարելելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքը օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շրկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով, ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»¹:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 որոշման մեջ մասնավորապես արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադրաիրավական վերոհիշյալ նորմերի ընդհանուր բովանդակությունից հետևում է.

...գ) ընթացիկ օրենսդրության խնդիրն է նյութական և ընթացակարգային նորմերի միջոցով սահմանել ու մանրամասնել ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրական կարգավիճակից բխող, այնպես էլ ընդհանուր իրավասության և մասնագիտացված ստորադաս դատարանների լիազորությունների շրջանակը, իրականացման կարգն ու պայմանները...» (ընդգծումը մերն է՝ Գ.Կ.):

Կամ, ՀՀ սահմանադրական դատարանն իր 08.10.2008 թիվ ՍԴՈ-765 որոշմամբ արձանագրել է.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ հստակ ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան Պայմանավորվող պետություններին չի պարտադրում

¹ ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

ստեղծել վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ, այնուամենայնիվ, եթե ստեղծվել է, պետք է ապահովվի, որ շահագրգիռ անձինք այդ դատարաններում ևս օգտվեն Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ արդար դատաքննության հիմնարար երաշխիքներից, այդ թվում՝ նաև քաղաքացիական իրավունքների և պարտականությունների կապակցությամբ դատարանի մատչելիությունը»:

Իսկ 15.07.2011թ. թիվ ՍԴՈ-984 որոշմամբ ՀՀ սահմանադրական դատարանը հատուկ նշել է. «Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի ողջ բովանդակությունը հանգում է նրան, որ այդ ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*): Այն դեպքում, երբ անձի սահմանադրական իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, այդ իրավունքի վերականգնման նպատակով մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը ենթադրում է այնպիսի վիճակի ստեղծում, որը գոյություն է ունեցել տվյալ դատական ակտի բացակայության պայմաններում...»:

Իր 07.01.2010թ. թիվ ՍԴՈ-902 որոշման մեջ ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրել է.

«Խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի անհրաժեշտ բաղադրարարն է հանդիսանում անձի **խախտված իրավունքի վերականգնումը**: Վերջինս ենթադրում է այն բացասական հետևանքների վերացում, որոնք անձի համար առաջացել են իրավունքի խախտման արդյունքում: Որպես կանոն, այդ բացասական հետևանքների վերացումը տեղի է ունենում մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնմամբ: Սակայն, առանձին դեպքերում, մինչև իրավունքի խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումը կարող է օբյեկտիվորեն անհնարին լինել: Այս դեպքում որպես խախտման բացասական հետևանքները վերացնելու իրավական միջոց է ծառայում, ինչպես նշվեց, **անձի կրած վնասի դիմաց տրվող փոխհատուցումը**: Այս մոտեցումն է արտահայտված նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում (տե՛ս, մասնավորապես, Վասիլեսկուն ընդդեմ Ռումինիայի գործով, *Vasilescu v. Romania*, 1998թ. մայիսի 22-ի վճիռը, կետ 61): Տվյալ դեպքում անօրինականորեն ազատված անձին աշխատանքում չվերականգնելու, այն է՝ մինչև իրավախախտման փաստը գոյություն ունեցած վիճակը վերականգնելու անհնարինության դեպքում անձի խախտված իրավունքի արդյունավետ իրավական պաշտպանությունը կարող է տեղի ունենալ նրան փոխհատուցում վճարելու միջոցով: Այս գաղափարն է ամրագրված նաև վերոհիշյալ ԱՄԿ թիվ 158 կոնվենցիայի 10-րդ հոդվածում»:

Այսպիսով, **արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բաղադրարարն է հանդիսանում խախտված իրավունքի վերականգնումը, մասնավորապես՝ անձի կրած վնասի դիմաց փոխհատուցում պահանջելու իրավունքը**:

Ինչ վերաբերում է իրավական որոշակիության սկզբունքին, ապա այն հանդիսանում է պետական իշխանության նկատմամբ վստահության և իրավական պետության սկզբունքների կարևոր բաղադրատարրերից մեկը: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին:¹

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «...*օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (res judicata) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համարելու իր վարքագիծը*»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»:²

* * *

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող նորմի՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 104. Ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը և կարգը

1. Ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում՝ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով:

¹ Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

² ՀՀ սահմանադրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

Օրենքի նշված հոդվածից հետևում է, որ **ոչ իրավաչափ վարչարարությամբ** ֆիզիկական անձին պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հիմքը վերջինիս ոչ գույքային վնաս պատճառելն է այնպիսի միջոցներով, ինչպիսիք են՝

- ա) անձի ազատությունը սահմանափակելը,
- բ) անձի անձեռնմխելիությունը խախտելը,
- գ) բնակարանի անձեռնմխելիությունը խախտելը,
- դ) անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելը,
- ե) անձի պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելը:

Ընդ որում, ըստ Օրենքի նշված հոդվածի՝ անձն իրավունք ունի պահանջելու կա՛մ դրամական միջոցներով հատուցում, կա՛մ առաջացած հետևանքների վերացում՝ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով:

Վիճարկվող նորմի սահմանադրականության խնդրի հետ կապված՝ անհրաժեշտ է պատասխանել երկու իրավական հարցադրումների՝

ա) արդյո՞ք ՀՀ օրենսդրությամբ նախատեսված են դրույթներ, որոնք սահմանում են պատճառված ոչ գույքային վնասի հատուցման **կարգը և պայմանները**,

բ) ի՞նչ չափանիշներ են սահմանված պատճառված ոչ գույքային վնասի դրամական հատուցման չափի **համարժեքությունը** որոշելու համար:

Ա) Անդրադառնալով առաջին հարցադրմանը՝ հարկ է նշել, որ 2015թ. սահմանադրական փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունն անմիջականորեն նախատեսել է վնասի հատուցման իրավունքը որպես հիմնարար սահմանադրական իրավունք.

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Հոդված 62. Վնասի հատուցման իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտն իր կարգավորումն է ստացել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 9-րդ գլխում: Մասնավորապես, քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածը վերաբերում է ոչ նյութական վնասի հասկացությանը և դրա հատուցմանը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 հոդվածը սահմանում է.

Հոդված 162.1. Ոչ նյութական վնասի հասկացությունը և դրա հատուցումը

1. Սույն օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պարկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ուրնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

2. Անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները.

1) կյանքի իրավունքը.

2) խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը.

3) անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը.

4) արդար դատաքննության իրավունքը.

5) անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը.

6) մորի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը.

7) հավաքների և միավորման ազատության իրավունքը.

8) իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը.

9) սեփականության իրավունքը:

3. Եթե դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից թիվ 7 Արձանագրության 3 հոդվածով նախատեսված պայմաններում, ապա նա իրավունք ունի դատական կարգով պահանջելու իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում (սույն օրենսգրքի իմաստով՝ հատուցում անարդարացի դատապարտման համար):

4. Պատվին, արժանապարտությանը կամ գործարար համբավին պատճառված վնասը հատուցվում է սույն օրենսգրքի 1087.1 հոդվածով, իսկ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը՝ 1087.2 հոդվածով սահմանված կարգին և պայմաններին համապատասխան:

5. Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

Ակնհայտ է, որ ի տարբերություն վիճարկվող Օրենքի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով թվարկված իրավունքների շրջանակը, որոնց խախտման դեպքում անձը ձեռք է բերում ոչ նյութական վնասի հատուցման իրավունք, առավել ընդարձակ է: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 104-րդ հոդվածով հատուցման են ենթակա ոչ իրավաչափ

վարչարարության հետևանքով վերևում թվարկված իրավունքներից միայն 3-րդ և 5-րդ կետերում նշվածների խախտումները: Ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով քաղաքացիական նորմում նշված այնպիսի իրավունքների խախտումները, ինչպիսիք են, օրինակ, *մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը կամ հավաքների և միավորման ազատության իրավունքը*, վիճարկվող օրենքի իմաստով նախատեսված չեն որպես հատուցման ենթակա իրավունքի խախտումներ: Այլ կերպ ասած՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով *մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու կամ հավաքների և միավորման ազատության իրավունքի խախտման* դեպքում վնասի հատուցման կարգն ու պայմանները օրենքով կարգավորված չեն՝ հակառակ Սահմանադրության պահանջի: Նույնը վերաբերում է նաև մի շարք այլ հիմնարար սահմանադրական իրավունքների, որոնց խախտմամբ պատճառված ոչ գույքային վնասը Սահմանադրության իմաստով ենթակա է հատուցման, սակայն նախատեսված չեն այդպիսի հատուցման համապատասխան կարգ և պայմաններ գործող օրենսդրությամբ:

Հարկ է նկատել, որ վնասի հատուցման իրավունքը գործող Սահմանադրության մեջ ներմուծվեց 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով: Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1. հոդվածի 5-րդ մասը լրացվել է 2015 թվականին՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է՝ 21.12.2015թ., ուժի մեջ է մտել 01.01.2016թ. ՀՕ-184-Ն), այսինքն՝ վիճարկվող օրենքի ընդունումից շուրջ 10 տարի հետո, սակայն սահմանադրական փոփոխություններից հետո և քաղաքացիական օրենսգրքի նշված լրացման հետ միաժամանակ օրենսդիրը չի վերանայել վիճարկվող օրենքի իրավակարգավորումները՝ քաղաքացիական իրավակարգավորումներին համապատասխան, ինչի հետևանքով առաջացել է իրավակարգավորման բաց:

Սահմանադրական դատարանն իր՝ 2010թ. փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով **իրավունքի բացի** հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է. «*Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համարեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գործող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:*

Զարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն

այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը (տե՛ս նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 14.09.2010թ. թիվ ՍԴՈ-914 որոշումը):

Այսպիսով, գտնում ենք, որ առկա է օրենսդրական բաց այնքանով, որքանով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքվ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման կարգը և պայմանները բավարար կարգավորված չեն: Ընդ որում, օրենսդրական բացը չի ապահովում անձի՝ վնասի հատուցման իրավունքի իրացման հնարավորությունը, ինչը նշանակում է, որ քննարկվող օրենսդրական բացը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը:

ՀՀ սահմանադրական դատարանը 2010 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՍԴՈ-929 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

*«7. Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում և 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված՝ «օրենքով սահմանված կարգով» բառակապակցության բովանդակությանը, ապա սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրությունը հղում կատարելով օրենքին՝ միաժամանակ առաջադրում է փոժողին փոխհատուցելու այնպիսի կարգ սահմանելու պահանջ, որը պետք է երաշխավորի գործուն մեխանիզմ խնդրո առարկա իրավունքի արդյունավետ իրացման համար: Նման մեխանիզմի գոյությունը կարող է ապահովվել նաև այն դեպքում, երբ հատուցման իրավունքի իրացման՝ օրենքով սահմանված դատական կարգը պետական տուրքի վճարումից ազատելու արդյունքության ձևով արդարացի պայմաններ ստեղծի այդ իրավունքի իրացման համար, և այնպիսի դեպքերում, երբ փոխհատուցման իրավունքն անվիճելի է, այսինքն՝ օրենքով սահմանված կարգով նախօրոք հաստատված է պետական իրավասու մարմնի, պաշտոնատար անձի այն գործողության (անգործության) փաստը, որի արդյունքում անձին պատճառվել է վնաս: Հետևաբար, օրենսդիրը պետք է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 4-րդ մասում և 20-րդ հոդվածի 5-րդ մասում ամրագրված իրավունքների արդյունավետ ու անարգել իրացման նպատակով **սահմանի արտադատական կամ դատական կարգով փոխհատուցման պահանջ ներկայացնելու արդյունավետ և գործուն համակարգ:***

... Գործող իրավակարգավորումը վկայում է, որ կիրառված միջոցի և հետապնդված նպատակի միջև չկա ողջամիտ համաչափություն՝ ստեղծվել է ոչ իրավաչափ հավասարակշռություն անձի խախտված իրավունքների վերականգնման և պետության շահերի պաշտպանության միջև, որն աղավաղում է պատճառված վնասի հատուցման սահմանադրական իրավունքի էությունը:»:

Ելնելով սահմանադրական դատարանի վերոնշյալ դիրքորոշումներից՝ գտնում ենք, որ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի, այդ թվում՝ վնասի հատուցման միջոցով իր խախտված իրավունքի վերականգնման երաշխավորման և այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պետության պոզիտիվ պարտականությունը**

բավարար կատարված չէ, քանի որ օրենսդրությամբ նախատեսված չէ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ գույքային վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու արդյունավետ և գործուն համակարգ:

Բ) Ինչպես արդեն նշել ենք, վիճարկվող դրույթը սահմանում է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ գույքային վնասի՝ **համարժեք չափով** դրամական միջոցներով հատուցում պահանջելու իրավունքը:

Օրենսդրորեն, սակայն, սահմանված չեն այն չափանիշները, որոնք հիմք են հանդիսանում *ոչ գույքային վնասի դրամական հատուցման չափի համարժեքությունը որոշելու համար*: Օրենսդրական կարգավորումներից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում հատուցման ենթակա գույքային վնասի համարժեք դրամական հատուցման չափը որոշվում է ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից:

Քաղաքացիական օրենսգրքի իմաստով, ինչպես արդեն նշել ենք, ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ունեցած կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

Նշված սահմանումից հետևում է, որ հատուցման չափը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել «զոհի» անձը, նրա իրավունքների խախտման բնույթը և ծանրության աստիճանը, նյութական կամ ոչ նյութական բարիքների արժեքավորությունը, դրա դեմ ունեցած կամ վարչարարության բնույթը, դրա ոչ իրավաչափության աստիճանը և այլն:

Կարծում ենք, «պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով» ձևակերպումը չի համապատասխանում իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին այնքանով, որքանով չի սահմանում այն հիմնական չափանիշները, որոնց հիման վրա որոշվում է ոչ գույքային վնասի և դրամական հատուցման չափի համարժեքությունը: Ուստի, այս առումով ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ գույքային վնասի հատուցման պահանջ ներկայացնելու իրավունքի իրացման արդյունավետ և գործուն համակարգ առկա չէ, ինչը խոչընդոմ է անձի՝ քննարկվող սահմանադրական իրավունքի պատշաճ իրականացմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի դրույթների սահմանադրականությունը խնդրահարույց է: